

**ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ**

Աշշուրը և միտաննական խնդիրը

Ք.ա. XV դարի կեսի Աշշուր պետության քաղաքական պատմության մասին քիչ բան է հայտնի: Ք.ա. մոտ 1440-1420 թվականների ընթացքում¹ Աշշուրը նվաճվում է միտտանական արքա Սաուսադատտարի կողմից: Սակայն, պետք է նշել, որ Միտաննիի տիրապետության ներքո Աշշուրի ենթակայության խնդիրները՝ շարունակում են մնալ քննարկման փուլում²:

Աշշուրը նվաճելուց հետո միտաննական արքայի հրամանով քանդվում են Աշշուրում Պուզուր-Աշշուր III-ի (Ք.ա. XV դարի 2-րդ կես) կողմից կառուցված «Նոր քաղաքի» պարիսպները³: Հետագայում Աշշուր-բել-նիշեշուն (Ք.ա. 1407-1399 թթ.⁴) վերականգնեց այն⁵: Ելնելով

¹ Koliński R., Making Mittani Assyrian, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, Essays dedicated to Frans Wiggermann, B. S. During (ed.), Leiden, 2015, p. 9; Llop-Raduà J., Foreign Kings in the Middle Assyrian Archival Documentation, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, in Düring B. (ed.), Essays Dedicated to Frans Wiggermann (Consolidating Empires Project I), Leiden, 2015, p. 244; Lion B., Assur unter der Mittaniherrschaft, in J. Renger (ed.), Assur - Gott, Stadt und Land, Colloquien der Deutschen Orient-Gesellschaft 5, Wiesbaden, 2011, S. 149-67.

² Lion B., Assur unter der Mittaniherrschaft, S. 149ff.

³ Grayson A. K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia, Assyrian Periods, Vol. 1 (այսուհետև՝ RIMA, 1), Toronto, 1987, A.O.61.1, ll. 5-10; A.O.61.2-3, A.O.73.1, 13-21; Ցականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, 2014, թիվ IX-X, էջ 235-236:

⁴ Ք.ա. II հազարամյակի մերձավորարևելյան և մասնավորապես միջինասորեստանյան ժամանակագրության վերաբերյալ մանրամասն տե՛ս Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Ninurta-apil-ekur und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1979, N 71, S. 19-38; Wilhelm G., J. Boese, Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14.

Աշշուր-բել-նիշեշուի ամրաշինարարական գործունեությունից, եգիպտա-միտաննական հակամարտությունից և Միտաննիում օրեցօր նկատվող քաղաքական ճգնաժամից⁶ արդեն Աշշուր-բել-նիշեշուի կառավարման սկզբներից կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ Աշշուրի արքան գործում էր որպես անկախ տիրակալ⁷: Դեռ ավելին՝ ելնելով միջազգային հարաբերությունների ընձեռած բարենպաստ պայմաններից՝ Աշշուր-բել-նիշեշուն, օգտագործելով հարմար առիթը, առաջին հերթին կարգավորում է հարաբերությունները հարավային հարևանի՝ Կասսիտական Բաբելոնիայի հետ: Աշշուր-բել-նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարահնդաշ I-ի միջև կնքվեց մի նոր պայմանագիր⁸, որն, ըստ երևույթին, կրկնում էր Պուզուր-Աշշուր III-ի և

Jahrhunderts v. Chr. In: P. Åström (ed.), High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology held at the University of Gothenburg 20th-22nd August 1987, Part 1, Gothenburg, 74-117; Reade J., Assyrian King-Lists, the Royal Tombs of Ur, and Indus Origins, Journal of Near Eastern Studies, 2001, N 60/1, pp. 1-29; Kitchen K. A., Egyptian and Related Chronologies – Look, no Sciences, no Pots!, The Synchronisation of Civilisations in the Eastern Mediterranean in the Second Millennium BC. III, Edited by M. Bietak and E. Czerny, Proceedings of the SCIEM 2000-2003 2nd Euro Conference, Wien 2007, pp. 164-171; Novák M., Mittani Empire and the Question of Absolute Chronology: Some Archaeological Considerations, in The Synchronisation of Civilisations in the Eastern Mediterranean in the Second Millennium BC. III, pp. 389-401, և բազում այլք:

⁵ RIMA, I, A.O.69. II. 4-10, 1001, p. 100.

⁶ Մանրամասն տե՛ս Ավետիսյան Հ. Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ., Երևան, 2002, էջ 41-63: Аветисян Г. М., Государство Митанни (военно-политическая история в XVII-XIII вв. до н.э.), Ереван, 1984, стр. 43 и сл.

⁷ Տականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, էջ 236:

⁸ «^mKa-ra-in-da-áš MAN (^{šar}₄) [^{kur}] Kar-d[u-ni-áš] ú ^mAš-šur-EN.UN.MEŠ-šú MAN ^{kur}Aš-šur rík-sa-a-ni ina bi-rit-šú-nu a-na a-ḫa-meš ú-ra-ki-su ú ma-mi-tu ina UGU mi-iš-ri an-na-ma a-na a-ḫa-meš id-di-nu» - «Կարդունիաշի (Բաբելոն - Ռ.Տ.) արքա Կարահնդաշը և Աշշուրի արքա Աշշուր-բել-նիշեշուն փոխադարձ համաձայնության եկան և փոխադարձ երդում տվեցին այս սահմանի հարցում», հմմտ.՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, New York, 1975,

Բուրնա-Բուրիաշ I-ի միջև կնքված պայմանագիրը, ըստ որի՝ կարգավորվում էին սահմանային վեճերը երկու երկրների միջև⁹:

Աշշուր-բեյ-նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարաինդաշ I-ի միջև կնքված պայմանագրի փաստից ելնելով՝ ակնհայտ է, որ Աշշուրի տիրակալը, հազիվ թե լինելով միտաննական տիրապետության տակ, կարողանար միջազգային դիվանագիտական կապ հաստատել երրորդ երկրի հետ: Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից. Կարելի է հստակորեն նշել, որ Աշշուրի նկատմամբ միտաննական տիրապետության ժամանակագրական խնդիրները վերանայման և նորովի խմբագրման կարիք ունեն:

Աշշուր-բեյ-նիշեշուի հաջորդները շարունակեցին նրա քաղաքականությունը, և Աշշուրը, դուրս գալով քաղաքական ճգնաժամից, բռնեց հզորացման ուղին:

Աշշուր-բեյ-նիշեշուի եղբորորդի Աշշուր-նադին-ախիսե II-ը (Ք.ա. 1390-1381 թթ.)¹⁰, ըստ Էլ-Ամարնայի EA 16 նամակի¹¹, ըստ երևույթին դիվանագիտական կապ է հաստատել Եգիպտոսի հետ և փարավոնից (Ամենհոտեպ III-ից (Ք.ա. 1390-1352 թթ.) ստացել 20 տաղանդ (մոտ 606 կգ) ոսկի՝

«(19-21)[u]n-du ^{md}A-šur-na-din-ŠEŠ.MEŠ a-bi a-na KUR Mi-iš-ri iš-pu-ru 20 GUN.KU.GI ul-te-bi-lu-né-šu» -

«(19-21)Երբ Աշշուր-նադին-ախիսեն՝ իմ հայրը (նախնին - Ռ.Յ.),

Chron. 21, ll. 1-4; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, Chron. 10, ll.1-4.

⁹ «^mPu-zur-Aš-šur šar₄ ^{kur}Aš-šur ú ^mBur-na-bur-ia-áš šar₄ ^{kur}Kar-du-niáš it-mu-ma mi-iš-ri ta-ḫu-mu an-na-ma ú-ki-nu» - «Աշշուրի արքա Պուզուր-Աշշուրը և Կարդունիաշի արքա Բուրնա-բուրիաշը սահմանի վերաբերյալ երդվեցին և հաստատեցին այդ սահմանագիծը», հմմտ.՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, ll. 5-7; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, ll.5-7; Galter H. D., Die Synchronistische Geschichte und die assyrische Granzpolitik, History of the Ancient Near East, Monographs – III/2, Padova, 1999, S. 30.

¹⁰ Քիչ հավանականությամբ գուցե նաև Աշշուր-նադին-ախիսե I-ը (Ք.ա. XV դարի 2-րդ կես):

¹¹ Նամակը փարավոն Ամենհոտեպ IV-ին (Էխնաթոն) (Ք.ա. 1352-1336 թթ.) ուղարկվել է Աշշուր-ուբալլիթ I-ի (Ք.ա. 1353-1318 թթ.) կողմից՝ Kitchen K. A., Egyptian and Related Chronologies - Look, no Sciences, no Pots!, p. 165f.

գրել է Եգիպտոս, նրան ուղարկվել է 20 տաղանդ ոսկի»¹²:

Աշշուր-բել-նիշեշուի որդի Էրիբա-Ադադ I-ը (Ք.ա. 1380-1354 թթ.) իր տնտեսական, շինարարական և այլ բնույթի արձանագրություններում իր տիտղոսաշարին արդեն ավելացնում է «արքա» տիտղոսը¹³: Էրիբա-Ադադ I-ին հաջորդեց որդին՝ Աշշուր-ուբալլիթ I-ը (Ք.ա. 1353-1318 թթ.)¹⁴, որն իրեն դրսևորեց որպես հմուտ դիվանագետ և ռազմական գործիչ:

Աշշուր-ուբալլիթ I-ի կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն դուրս եկավ իր սահմաններից և անցավ հարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին: Արևելքից աշշուրցիները սկսեցին ակտիվորեն սպառնալ Միտաննիին, դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Եգիպտոսի և Բաբելոնիայի հետ:

Միտաննիի կողմից Աշշուրի գրավման մասին աղբյուրագիտական հիշատակությունը գալիս է Աշշուր-ուբալլիթ I-ի ժամանակաշրջանից՝ խեթական արքա Սուպպիլուլիումա I-ի (Ք.ա. 1350-1322 թթ.) ու միտաննական արքայազն Շատտիվազայի պայմանագրի տեքստից՝

«(8) *dalāt kaspi u hurāši ša ^{URU}Sauššatar šarru abu ab abī-ya ištu māṭ ^{URU}A[ššur] (9) ana multarriḫutti ana dannatī-šu ilqû ina ^{URU}Waššukkanni ana É.GAL-šu iz-zaqap-šunu*»

«(8) Այսպես է ասում Շատտիվազան՝ Տուշրաթթա արքայի որդին՝ դուռն արծաթե և ոսկե, որը Սաուշշատարը (Սաուսադատտար - Ռ.Յ.)՝ իմ նախապապը, Աշշուրի երկրից (9) իր զորությունը վեհացնելու համար, նա բերեց իր պալատ՝ Վաշշուկաննի»¹⁵:

¹² Artzi P., EA 16, Altorientalische Foeschungen, 1997, № 24, pp. 320-336; Moran W. L., The Amarna Letters, Baltimore-London, 1992, EA 16, p. 39.

¹³ Ցականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, էջ 237:

¹⁴ Աշշուր-ուբալլիթ I-ի օրոք Աշշուրի ռազմաքաղաքական պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Maidman M. P., Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century, KASKAL, 2011, N 8, p. 100ff.: Շատ հետաքրքիր է նաև Աշշուր-ուբալլիթ I-ի վերաբերյալ Ջ.-Ջ. Գլասսների կողմից՝ որպես Ասորեստանի վերածննդի ճարտարապետ բնութագրումը՝ "Aššur-uballit I was the architect of Assyrian resurgence" - Glassner J.-J., Mesopotamian Chronicles, p. 176.

¹⁵ Weidner E. F., Politische Dokumente aus Kleinasien, Die Staatsverträge in akka-

Այս պայմանագիրը կնքվել է Միտաննիի համար օրհասական պահին: Երկրում բռնկված ներքաղաքական պայքարը պալատական հեղաշրջմամբ, որի արդյունքում Միտաննիի արքա Տուշրատտան սպանվեց: Մի կարծիքի համաձայն՝ Միտաննիում պալատական հեղաշրջման թիկունքում կանգնած է եղել Խաթթիի արքա Սուպաիլուլիումա I-ը¹⁶: Միտաննիում, ըստ երևույթին, նույն Սուպաիլուլիումա I-ի օժանդակությամբ գահ է բարձրանում Արտադամա II-ը: Սակայն քիչ անց միտաննական գահին նրան փոխարինում է որդին՝ Շուտտառնա III-ը: Չի բացառվում, որ Շուտտառնա III-ի նշանակումը տեղի ունենար Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթ I-ի հովանավորությամբ¹⁷: Որին, ինչպես կտեսնենք ստորև, իր երախտագիտությունն է հայտնում Շուտտառնա III-ը: Իսկ, ինչ վերաբերում է գահի օրինական ժառանգորդ Շատտիվազային, ապա նա, փախուստի դիմելով, հայտնվում է նախ՝ Բաբելոնիայում, այնուհետև՝ Խաթթիում: Խաթթիի արքան իր հովանավորության տակ է վերցնում Շատտիվազային¹⁸:

Շուտտառնա III-ը, հայտնվելով անհուսալի իրավիճակում, օգնության խնդրանքով դիմում է Միտաննիի նախկին «հպատակներին»՝ Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթ I-ին ու Ալզիի Անտարատլի արքային: Այստեղ հետաքրքիր է նաև այն, որ այս առումով Շատտիվազան իր անհանգստությունն է հայտնում՝ նշելով, որ նա ստորացավ անգամ իր հոր ծառայի առջև, որը հարկեր չէր վճարում և դեռ ավելին՝ իր հարըս-

discher Sprache aus dem Archiv von Boghazkoy, Leipzig, 1923, N 2, S. 38-39; Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996, N 6B, § 2, p. 44f.; Wilhelm G., Bemerkungen zu der Erklärung Šattiwazzas CTH 52, Festschrift in Honor of Belkis Dinçol and Ali Dinçol, ed. A. Alparslan, M. Doğan-Alparslan, H. Peker, Istanbul, 2007, S. 778.

¹⁶ Na'aman N., Tushratta's Murder in Shuppiluliuma's Letter to Akhenaten (EA43), *Abr-Nahrain*, 1995, N 33, pp. 116-118; Ավետիսյան Հ. Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների ..., էջ 75-76; Аветисян Г. М., Государство Митанни, стр. 83 и сл.

¹⁷ Koliński R., *Making Mittani Assyrian*, p. 9.

¹⁸ Maidman M. P., *Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century*, p. 127ff.; Bryce T., *The Kingdom of the Hittites*, Oxford, 2005, pp. 180, 184; Koliński R., *Making Mittani Assyrian*, p. 10.

տությունն է նվիրաբերում: Շուտտառնա III-ը վերադարձրեց նաև Սաուսադատտարի կողմից տարված «արծաթե և ոսկե դուռը»¹⁹:

Պայմանագրի տեքստից ակնհայտ է, որ Աշշուր-ուբալլիթ I-ը, ամենայն հավանականությամբ, իր կառավարման առաջին իսկ տարում հրաժարվել է հարկ առաքել միտաննական արքունիք: Հետաքրքիր է նաև այն, որ Աշշուրի նկատմամբ իր հավակնություններն ուներ նաև կասսիտական Բաբելոնիան: Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II-ը (Ք.ա. 1350-1323 թթ.) Եգիպտոսի փարավոն Էխնաթոնին ուղարկած Էլ-Ամարնայի EA9 նամակում Աշշուր-ուբալլիթ I-ին համարում է հպատակ:

Բուրնա-Բուրիաշ II-ը գրում է հետևյալը. «(31-35.) Այժմ, ինչ վերաբերում է իմ աշշուրական հպատակներին, ապա ես չեմ նրանց ուղարկել ձեզ մոտ: Ինչո՞ւ են նրանք իրենց կամքով գալիս ձեր երկիր: Եթե դու հարգում (տառացի՝ սիրում) ես ինձ, ապա նրանք ոչ մի գործարք չեն կատարելու: Ձեռնունայն ուղարկիր նրանց ինձ մոտ»²⁰:

Էլ-Ամարնայի նամակագրությունների ժամանակագրություններից հայտնի է, որ այս նամակը, ամենայն հավանականությամբ, գրվել է Աշշուր-ուբալլիթ I-ի կողմից Եգիպտոս առաքված դեսպանություններից հետո²¹: Սակայն, թե ինչ կապակցությամբ կամ իրադարձությունից հետո է Բուրնա-Բուրիաշ II-ն Աշշուրի արքային համարում իր հպատակ, արձանագրված ոչ մի տեղեկություն չկա: Համենայն դեպս հայտնի ոչ մի աղբյուր այդ մասին տեղեկություն չի հայտնում:

Ինչևէ, միտաննական հարցն իր ժամանակավոր լուծումը ստա-

¹⁹ Weidner E. F., Politische Dokumente aus Kleinasien, N° 2, տող 6-7; Beckman G., Hittite Diplomatic Texts, N 6B, § 2, p. 44; Wilhelm G., Bemerkungen zu der Erklärung Šattiwazzas CTH 52, S. 779; Koliński R., Making Mittani Assyrian, p. 9f.; Llop-Radua J., Did the Assyrians Occupy the Euphrates-elbow in the Middle Assyrian Period (Late Bronze Age)?, Broadening Horizons 3, Conference of Young Researchers Working in the Ancient Near East, F. Borrell Tena et al. eds., Barcelona, 2012, p. 209; Wilhelm G., The Kingdom of Mitanni in Second-Millennium Upper Mesopotamia, in Civilizations of the Ancient Near East (ed. in Chief J. M. Sasson), vol. II, New York, 1995, p. 1249f.

²⁰ Moran W. L. The Amarna Letters, p. 18.

²¹ Տե՛ս EA15 և EA16 նամակները՝ Moran W. L. The Amarna Letters, p. 37ff.

ցավ այն ժամանակ, երբ խեթական ուժերի օժանդակությամբ Շատտիվազան բազմեց հայրական գահին: Ըստ պայմանագրի՝ Շատտիվազան պիտի ամուսնանար Սուպպիլուլիումա I-ի դստեր հետ. «Արքայազն Շատտիվազան կլինի թագավոր Միտաննի երկրի, և Խաթթիի թագավորի (Սուպպիլուլիումա I-ի - Ռ. Յ.) դուստրը պետք է լինի Միտաննիի թագուհին»²²:

Այս գործընթացում Աշշուր-ուբալլիթ I-ը իրեն դրսևորեց որպես հեռատես քաղաքական գործիչ և չգնաց բացահայտ ընդհարման խեթերի հետ²³:

Ինչպես վերևում նշվեց, Աշշուր-ուբալլիթ I-ը, ամենայն հավանականությամբ, նույն ժամանակահատվածում դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Բաբելոնիայի հետ: Վերջինիս հետ բարեկամությունն ամրապնդելու նպատակով Աշշուր-ուբալլիթ I-ն իր Մուբալլիտատ-շերուա դստերը կնության է տալիս Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II-ին (Ք.ա. 1365/50-1333/23 թթ.) կամ նրա որդի Կարահնդաշ II-ին²⁴: Վերջինիս մասին իմանում ենք ասորեստանյան «Համաժամանակյան պատմության» Աշշուր-ուբալլիթ I-ին վերաբերող հատվածից: Ըստ «Համաժամանակյան պատմության»՝ Բաբելոնիայում Աշշուր-ուբալլիթ I-ի թոռ Կարախանդաշի դեմ ապստամբել էին կասսիտական զորքերը: Սպանված Կարախանդաշի փոխարեն գահը զավթել էր ազնվական Նազի-Բուգաշը²⁵: Աշշուրական զորքերը ներխուժում են

²² Beckman G., Hittite Diplomatic Texts, N 6A, § 7, p. 40; Bryce T., The Kingdom of the Hittites, p. 185; Bryce T., Letters of the Great Kings of the Ancient Near East: The Royal Correspondence of the Late Bronze Age, London - New York, 2003, p. 10.

²³ Bryce T., The Kingdom of the Hittites, p. 185.

²⁴ Այս առումով մասնագիտական գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ վերականգնումների ու կարծիքների առումով տե՛ս Maidman M. P., Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century, p. 124f., 132ff; Mladjov I. The Immediate Successors of Burna-Buriaš II Revisited, Nouvelles Assyriologiques Brèves et Utilitaires, 2016, N 1, p. 20; Mladjov I., More on the Immediate Successors of Burna-Buriaš II, NABU, N 3, 2016, pp. 106-111.

²⁵ «*ina tar-ši mAš-šur-úti.la (Aššur-uballit I) LUGAL (šar₄) KUR Aš-šur mKa-ra-ḫar-da-áš LUGAL KUR Kardu-ni-áš DUMU munusMu-bal-li-ta-at-dŠe-ru-ú-a DUMU.MUNUS mAš-šur-úti.la ÉRIN.MEŠ Kaš-ši-e ib-bal-ki-tu-ma GAZ-šu mNa-zi-bu-ga-áš [KUR*

Բաբելոնիայի տարածք և մահապատժի ենթարկելով Նազի-Բուզաշին՝ գահ են բարձրացնում Բուրնա-Բուրիաշ II-ի որդի Կուրիգալզու II Կրտսերին (Ք.ա. 1332/22-1308/1298 թթ.)²⁶: Կուրիգալզու II Կրտսերն Աշշուր-ուբալլիթ I-ի մահից հետո պատերազմ սկսեց վերջինիս որդի Էնլիլ-նիրարի I-ի (Ք.ա. 1317-1308 թթ.) դեմ և պարտություն կրեց²⁷: Աշշուրաբաբելոնյան հերթական պատերազմի պատճառը կրկին սահմանային վեճերն էին:

Տվյալ ժամանակահատվածում Աշշուրը մեկը մյուսի հետևից ձեռնարկում է մի շարք հաջողված արշավներ՝ արևմուտքում երբեմնի հզոր միտաննական թագավորության, արևելքում՝ էլամական ցեղերի, հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհի ցեղերի, իսկ հարավում՝ կասսիտների դեմ²⁸: Էնլիլ-նիրարի I-ի որդի Արիկ-դեն-իլին (Ք.ա. 1307-1296 թթ.)

Kaš-šá]-a-a DUMU la ma-ma-na LUGAL^{ú-te} a-na UGU-šú-nu iš-šú-ú - «Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթի ժամանակ կասսիտական զորքերն ապստամբեցին Կարդունիաշի արքա Կարախարդաշի՝ Աշշուր-ուբալլիթի դստեր՝ Մուբալլի-տար-շերուայի որդու դեմ և սպանեցին նրան: Նրանք նստեցրին ոչ մեկի որդի կասսիտ Նազի-Բուզաշին նրանց վրա թագավոր»՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. I, ll. 8-1; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, ll.8-12; Mladjov I. More on the Immediate Successors of Burna-Buriaš II, p. 106ff.

²⁶ «*[^mAš-šur-úti.l]a [a-na tu-u]r-ri gi-mil-li [šá ^mKa-r]a-in-da-áš DUMU [DUMU.MU-NUS-šú(?)]] a-na KUR Kar-du-ni-áš il-lik [^mNa-z]i-bu-ga-áš LUGAL (*šar*₄) KUR Kar-du-ni-áš i-duk [^mKu-r]i-gal-zu DUMU ^mBur-na-bur-ia-áš [a]-na LUGAL^{ú-ti} iš-kun ina GIŠ.GU.ZA AD-[šú] ú-[še-šib]*» - «Աշշուր-ուբալլիթն արշավեց Կարդունիաշ՝ վրեժխնդիր լինելու Կարաինդաշի՝ իր դստեր որդու համար: Նա սպանեց Կարդունիաշի արքա Նազի-Բուզաշին և իր հոր գահին բարձրացրեց Բուրնա-բուրիաշի որդուն՝ Կուրիգալզու Կրտսերին»՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col.I, ll. 13-17; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, ll.13-17; Mladjov I. More on the Immediate Successors of Burna-Buriaš II, p. 109 f.

²⁷ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. I, ll. 18-23; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, ll.18-23; RIMA, 1, A.0.74. 1001, p. 119.

²⁸ Косян А. В., Евфратско-тигрская контактная зона в III - первой половине I тыс. до н.э., На стыке мир-систем: из истории контактных зон древности и современности, том I, 2016, стр. 86-88; Յականյան Ռ., Ասորեստանի պատ-

նույնպես ակտիվ նվաճողական քաղաքականություն էր վարում: Նա մի շարք հաղթանակներ տարավ Միտաննիի նկատմամբ՝ երկրի սահմանները հարավ-արևմուտքում հասցնելով մինչև Եփրատ գետի հոսանքի միջին շրջան:

Արիկ-դեն-իլին սկսում է կիրառել «^m**A-ri-ik-de-en-DINGIR (Arik-dîn-ili) LUGAL (šarru) dan-nu LUGAL (šar) KUR (māt) ^dAš-šur**»՝ «Արիկ-դեն-իլի հզոր արքա, Աշշուրի արքա»²⁹ տիտղոսը, որն այսուհետև սովորական մի երևույթ պետք է դառնա ասորեստանյան արքաների տիտղոսաշարերում: Արիկ-դեն-իլի հաջորդները և մասնավորապես Ադադ-նիրարի I-ը (Ք.ա. 1295-1264 թթ.), սկսում է կիրառել արքայական իշխանության հզորությունը հաստատող տիտղոս՝ «^m**IŠKUR-ÉRIN.TÁH (Adad-nārārī) LUGAL KIŠ LUGAL dan-nu LUGAL KUR Aš-šur DUMU GÍD-DI-DINGIR (Arik-dîn-ili) LUGAL KUR Aš-šur DUMU ^dEn-lil-ÉRIN.TÁH (Enlil-nārārī) LUGAL KUR Aš-šur-ma**» - «Ադադ-նիրարի տիեզերքի արքա, հզոր արքա, Աշշուրի արքա, Արիկդենիլի որդին՝ Աշշուրի արքայի, Էնլիլ-ներարիի որդին՝ նույնպես Աշշուրի արքայի»³⁰:

Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ն (Ք.ա. 1233-1197 թթ.) իր տիտղոսաշարին ավելացնում է ևս 14 տիտղոս, ինչպիսիք են՝ «**šar šarrāni**» - «արքաների արքա», «**bēl bēlē**» - «տերերի տեր», աստված և այլն³¹:

Շուլմանու-աշարեդ³² I-ը (Ք.ա. 1263-1234 թթ.) և Թուկուլթի-Նինուրտա I-ը նույնպես վարում էին ակտիվ նվաճողական քաղաքակա-

մության պարբերացման հարցի շուրջ, էջ 238; Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 14-16, 18-28, 73-76:

²⁹ RIMA, 1, A.0.75. 1, ll. 1-3, p. 120.

³⁰ RIMA, 1, A.0.76.3, ll. 1-4, p. 136.

³¹ Sazonov V., Die mittelassyrischen, universalistischen Königstitel und Epitheta Tukūlti-Ninūrtas I (1242-1206), in *Identities and Societies in the Ancient East-Mediterranean Regions*, ed. by T. R. Kämmerer, *Alter Orient und Altes Testament*, 2011, Band 390/1, S. 235-276; ինչպես նաև՝ Harmanşah Ö., *Beyond Aššur: New Cities and the Assyrian Politics of Landscape*, *Bulletin of the American Schools of Oriental Research*, No. 365, 2012, pp. 53-77.

³² Աշշուրի այս արքայի անունն առավել հայտնի է *Սալմանասար* ձևով: Անվան այս ձևն առաջացել է Աստվածաշնչից՝ հունարենի միջնորդությամբ:

նություն՝ Աշշուրը դարձնելով տարածաշրջանի գերիզոր պետություն:

Այս շրջանում, ինչպես նշում է Ա. Քոսյանը, Աշշուրի. «արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հյուսիսից արևմուտք ձգվող և խեթերի կողմից վերահսկվող «կիսալուսնի» ճեղքումն էր, որը թույլ կտար ճանապարհի հարթել դեպի հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի առևտրական ուղիներն ու կենտրոնները»³³:

Ադադ-նիրարի I-ի³⁴ և մասնավորապես Շուլմանու-աշարեդ I-ի հարվածների տակ ընկավ Միտաննիի պետությունը³⁵: Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ը Ք.ա. մոտ 1223 թվականին գրավեց և շուրջ 7 տարի իր իշխանությանը ենթարկեց Բաբելոնիան³⁶: Նա գրեթե ամեն տարի առաջնորդում էր աշշուրական բանակը աշխարհագրական տարբեր

³³ Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը, էջ 13: Ժամանակաշրջանի քաղաքական պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Kertai D., The History of Middle-Assyrian Empire, TALANTA, XL-XLI, 2008-2009, pp. 25-51.

³⁴ RIMA, 1, A.O.76.3, II. 4-36, p. 136: Ադադ-նիրարի I-ի արձանագրություններից (RIMA, 1, A.O.76.1, II. 27-32, p. 132) մեկի համաձայն՝ դեպի Մուծրու և Շուրրիա երկրներ է արշավել նաև նրա պապ Աշշուր-ուբալլիթ I-ը: Ըստ ասորեստանյան «Համաժամանակյան պատմության»՝ Ադադ-նիրարի I-ի և Բաբելոնիայի արքա Նազի-Մուրուտտաշի միջև կրկին սահմանային խնդիրների պատճառով պատերազմ է բռնկվում, որն ավարտվում է Բաբելոնիայի արքայի պարտությամբ՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. I, II. 24-30; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, col. I, II. 24-30.

³⁵ RIMA, 1, A.O.77.1, II. 56-87, p. 183f.; Sibata D., An Expedition of King Shalmaneser I and Prince Tukulti-Ninurta to Carchemish, in: Y. Heffron, M. Worthington and A. Stone (eds.), At the Dawn of History: Ancient Near Eastern Studies in Honour of J. N. Postgate, Eisenbrauns, 2017, pp. 491-506.

³⁶ RIMA, 1, A.O.78.5, II. 48-69, p. 244f.; Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 21, col. II, II. 1-3; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 10, col. II, II. 1-3; Llop-Radua J., The Boundary Between Assyria and Babylonia in the East Tigris Region the Reign of Tukulti-Ninurta I (1233-1197 BC), Between the Cultures the Central Tigris Region from the 3rd to the 1st Millennium BC, Conference at Heidelberg January 22nd - 24th, 2009, ed. by P. A. Miglus, S. Mühl, 2011, pp. 209-215.

նուղղություններով: Նա ներխուժել է նաև Հայկական լեռնաշխարհ, որտեղ բախվել է Նաիրյան համադաշնության հետ³⁷:

Շուտով՝ Ք.ա. XII-XI դարերում, տեղի են ունենում բնակլիմայական կտրուկ փոփոխություններ, որի արդյունքում Եփրատ և Տիգրիս գետերի մակարդակների կտրուկ անկում է նկատվում: Ծանր տնտեսական պայմաններն ու հաճախակի դարձած ամորեական ցեղերի ասպատակությունները տարածաշրջանում սրեցին և գրեթե քայքայման եզրին կանգնեցրին սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունները³⁸: Այս ամենն էլ իր հերթին հանգեցնում է մերձավորարևելյան քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի ճգնաժամի³⁹:

Այս ամենից հետո միայն Թուկուլտի-ապիլ-Էշարրա (Թիգլաթպալասար) I-ի (Ք.ա. 1115-1077 թթ.) կառավարման ընթացքում քաղաքական կյանքի կարճատև ակտիվություն է նկատվում, որից հետո Աշշուրը կրկին ընկղմվում է քաղաքական քաոսի մեջ:

Չանգվածային տեղահանությունները Միջին-ասորեստանյան տերությունում

Նշված ժամանակաշրջանի աշշուրական արքաների կողմից Չանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան կամ դրվագային բնույթ են կրում: Այն՝ որպես պետության արտաքին քաղաքականության բաղկացուցիչ, ի հայտ է եկել ավելի ուշ՝ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի (Ք.ա. 745-727 թթ.) կառավարման ընթացքում⁴⁰: Աշշուրի տարածք նվաճված

³⁷ RIMA, 1, A.0.78.3, p. 241f.

³⁸ Issar A. S., Zohar M., *Climate Change - Environment and History of the Near East*, New York, 2007, p. 163ff.; Muhl S., *Middle Assyrian Territorial Practices in the Region of Ashur, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire*, ed. by F. Wiggermann, B. S. During, 2015, p. 49f.; Neumann J., Parpola S., *Climatic Change and the Eleventh-Tenth-Century Eclipse in Assyria and Babylonia*, *Journal of Near Eastern Studies*, 1987, N 46, pp. 168-179.

³⁹ Այս մասին մանրամասն տե՛ս Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 81-138:

⁴⁰ Յականյան Ռ., Չանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Վանի թագավորությունում (Ք.ա. VIII-VII դդ.), *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, 2014, N XXIX, էջ 46-50:

երկրների բնակչության տեղափոխման առաջին արձանագրված դեպքը հանդիպում ենք Արիկ-դեն-իլի (Ք.ա. 1307-1296 թթ.) կառավարման տարիներին, ապա վերջինիս որդի Ադադնիրարի I (Ք.ա. 1295-1264 թթ.) օրոք՝ կապված միտաննական խնդրի հետ⁴¹: Սակայն պետք է նշել նաև, որ այս ժամանակահատվածում գերված բնակչությանը հիմնականում սրի են քաշում⁴²:

Ի տարբերություն Արիկ-դեն-իլի և Ադադնիրարի I-ի դեպքերի, որոնք կարծես թե դրվագային բնույթ ունեն և եզակի էին, երևույթն առավել հաճախակի է դառնում Շուլմանու-աշարեդ I-ի և նրա որդի Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման ժամանակաշրջանում:

Շուլմանու-աշարեդ I-ն Ուրուատրիի դեմ կատարած իր արշավանքի նկարագրության մեջ նշում է, որ 8 երկրի 51 քաղաքի բնակչությանը գերության է քշել⁴³: Միտաննիի դեմ կատարած արշավանքի ընթացքում նա թալանում և ավերում է 180 քաղաք և տեղահանում ու կուրացնում 14.400 մարդու, որոնք կենդանի էին մնացել նրա արշավանքի արդյունքում⁴⁴: Այստեղ ակնհայտ է, որ ասորեստանյան արքան վերոհիշյալ քաղաքների բնակչությանն ուղղակի կուրացրել և որպես ռազմական ավար է տարել:

Իսկ Թուկուլտի-Նինուրտա I-ը նշում է, որ իր կառավարման առաջին տարում մերձեփրատյան գոտուց տեղահանել է 28.800 խեթահպատակ բնակչություն⁴⁵: Սակայն Շուլմանու-աշարեդ I-ի և Թուկուլտի-Նինուրտայի դեպքում այս երևույթը փաստացի կրում էր դրվագային բնույթ: Ամեն դեպքում նրանց օրոք, բացի այս դրվագային դեպքերից, մենք ուրիշ արձանագրված դեպքեր չունենք: Կարելի է ենթադրել, որ այդ դրվագային երևույթները չդարձան արտաքին և ներքին քաղաքականության բաղկացուցիչ մաս: Հետագայում՝ Թուկուլտի-Նինուրտայի մահից հետո, Աշշուրն ընկղմվեց քաղաքական քառուսի մեջ՝

⁴¹ RIMA 1, A.0.76.3, II. 35-51, p. 136f.

⁴² RIMA 1, A.0.75.8, II. 18-34, p. 126f.

⁴³ RIMA 1, A.0.77.1, II. 22-46, p. 183.

⁴⁴ RIMA 1, A.0.77.1, II. 56-87, p. 183f.

⁴⁵ RIMA 1, A.0.78.23, II. 27-42, p. 272.

ընդհուպ մինչև Թուկուլտի-ապիլ-Էշարրա I-ի կառավարումը⁴⁶: Վերջինս իր կառավարման առաջին տարում մուշկերի դեմ արշավանք է կատարում, որի արդյունքում հաղթելով մուշկերին՝ նա կենդանի մնացած 6000 զինվորի զինվորագրում է իր բանակ՝ «(84-88) *a-na la-a mi-nu ú-še-ša-a 6 LIM si-te-et um-ma-na-te-šu-nu ša i-na pa-an GIS.TUKUL.MEŠ-iaip-pár-ši-du GÌR.MEŠ-ia iš-ba-tu al-qa-šu-nu-ti-ma a-na UN.MEŠ KUR-ti-ia am-nu-šu-nu-ti*»⁴⁷ - «Ես վերցրի մնացած 6.000 զինվորներին, որոնք փախել էին իմ զենքից (և) ներկայացան ինձ, և **ես նրանց դարձրի իմ երկրի մարդիկ**»⁴⁸:

Թուկուլտի-ապիլ-Էշարրա I-ի որդու՝ Աշշուր-բել-կալայի (Ք.ա. 1074-1057 թթ.) արձանագրության մեջ առաջին անգամ հանդիպում ենք արքայի կողմից զանգվածային տեղահանության և վերաբնակեցման կիրառման վաղագույն դրսևորումներից մեկին: Արքան նշում է, որ դեպի Խաբխու⁴⁹ և Մարի կատարած արշավանքից հետո արմատախիլ է արել նրա բնակչությանը՝ «-[šu-nu] **as-su-[ha]**»⁵⁰: Հաջորդ հիշատակությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է նրա կողմից դեպի Բաբելոնիա կատարված արշավանքին: Արձանագրության մեջ տառացիորեն նշված է. «1 LIM ÉRIN.MEŠ KUR x [...] šap-[...] 4 LIM šal-la-su-nu **is-su-ḫa** KUR ^dA-šur» «1000 զինվոր [...] երկրից ... նրանցից 4000 գերի նա տեղահան արեց (տառացի՝ պոկեց, արմատա-

⁴⁶ Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 14, 16, 109-111: Ցականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, էջ 238-240:

⁴⁷ Grayson A. K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), RIMA 2, 1991, A.O.87.1, Col. I, l. 88; Col. II, l. 89- Col. III, l. 6; A.O.87.2, l. 22; հմմտ. նաև՝ Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, Wiesbaden, 1979, p. 81.

⁴⁸ RIMA 2, A.O.87.1, Col. I; Oded B., Mass Deportations and Deportees, 1979, p. 81; Wittke A.-M., Mušker und Phryger (Ein Beitrag zur Geschichte Anatoliens vom 12. Bis zum 7. Jh. v. Chr.), Wiesbaden, 2004, S. 32-34: Նույնի՝ Das Land Mušku, Aramazd: Armenian Journal of Near-Eastern Studies, 2007, vo. II, S. 132.

⁴⁹ RIMA 2, A.O.89.1, ll. 12-13.

⁵⁰ RIMA 2, A.O.89.1, ll. 14-16, հարկ է նշել նաև, որ Աշշուր-բել-կալայի արձանագրությունների հիշատակության բացակայությունը Բ. Օդետի աշխատությունում ակնհայտորեն կարելի է վրիպակ համարել:

խիլ արեց) *և բերեց ներքև՝ Աշուր*⁵¹: Հաջորդ հիշատակությունը, ըստ պահպանված տեղեկությունների, արդեն վերաբերում է շուրջ հարյուր տարի անց կառավարած Աշուր-դան II-ի (Ք.ա. 934-912 թթ.) կառավարման ժամանակաշրջանին: Ըստ Բ. Օդետի՝ Աշուր-դան II-ի կառավարման ժամանակաշրջանից սկսած՝ տեղահանությունները սկսում են պարբերական բնույթ կրել⁵²:

Ամփոփում

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ առնվազն Աշուր-բել-նիշեշուի (Ք.ա. 1407-1399 թթ.) կառավարման շրջանից սկսած՝ Աշուրն արդեն թոթափել էր միտանական լուծը: Իսկ Աշուր-բել-նիշեշուն էլ պետք է հանդես գա որպես Միջինասորեստանյան տերության հիմնադիր:

Ինչ վերաբերում է նշված ժամանակաշրջանի աշուրական արքաների կողմից կատարված զանգվածային տեղահանություններին ու վերաբնակեցումներին, պետք է նշել, որ տեղեկություններ գրեթե չկան կամ դրվագային բնույթ են կրում: Չանգվածային տեղահանություններն ու վերաբնակեցումներն Ասորեստանում որպես պետության արտաքին քաղաքականության բաղկացուցիչներ՝ ի հայտ են եկել ավելի ուշ՝ Թուկուլտի-ապիլ-էշարրա III-ի (Ք.ա. 745-727 թթ.) կառավարման ընթացքում:

TSAKANYAN RUSLAN

ON SOME FOREIGN AND DOMESTIC POLICY ISSUES OF MIDDLE ASSYRIAN EMPIRE

The article focused on the issues of the conquest of Assyria by the Kingdom of Mittani, and expressed an opinion that Mittanian supremacy over the Aššur was not long-lasting. Based on the construction work of Aššūr-bēl-nišešu (1407-1399 B.C.) and the fact of the treaty concluded between Karaindaš I, king of Babylon, it is evident that the king of Aššur

⁵¹ RIMA 2, A.O.89.7, Col. II, l. 2.

⁵² Oded B., Mass Deportations and Deportees, p. 19.

was acting as an independent ruler. We assume that hardly being under the domination of the Kingdom of Mittani, he could have established diplomatic relations with a third country and to the resolve border issues. Thus, proceeding from the above, it can be clearly stated that the chronological problems of Mittanian domination over Aššur need to be revised. And the Middle Assyrian Kingdom should be dated to the reign of Aššūr-bēl-nišešu.

Among the Middle-Assyrian kings' well-known inscriptions the first record of deportation in the area of Assyria we meet during the reign of Arik-dēn-ili (1307-1296 B.C.), and then in the reign of his son Adad-nīrāri I (1295-1264 B.C.). Kings of the Middle Assyria, mostly destroyed and plundered of conquered territories. Only in the inscription of Aššūr-bēl-kala (1074-1057 B.C.) for the first time we meet one of the earliest manifestations of the king's use of deportation and resettlement. It should also be noted that before the reign of Tukulti-apil-Ešarra (Tiglath-pileser) III (745-727 B.C.) this policy was not included in the agenda of the state policy, so the taking and transferring prisoners to the land of Assyria or any other country cannot be regarded as a mass deportation.